ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՎԵՐԱՑՎԱԾ՝ ՈԼՈՐՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԸ

1991 թ. անկախության նվաճումից ի վեր Հայաստանը որդեգրել է համաշխարհային ու եվրոպական կառույցներին միանալու և քաղաքակիրթ պետությունների հանրության լիիրավ անդամ դառնալու քաղաքականություն: Դրա անհրաժեշտ նախապայմաններից է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համապատասխանեցումը միջազգային չափանիշերին: Այդ նպատակով Հայաստանը ընդունել և վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ: Ստորև թվարկում ենք ազգային փոքրամասնությունների և կրոնի ոլորտին առնչվող հիմնական կոնվենցիաները:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Սույն կոնվենցիան ընդունվել է 1950թ. նոյեմբերի 4-ին, Հայաստանի Հանրապետությունը այն ստորագրել է 2001թ. հունվարի 25-ին և վավերացրել է 2002թ. ապրիլի 26-ին: Հայաստանի Հանրապետությունը իր անդամակցության արարողության պահին ստորագրել է Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության 1950 թվականի եվրոպական կոնվենցիան, և նրա թիվ 1, 4, 6, 7 արձանագրությունները: Համաձայն սույն Կոնվենցիայի 19-րդ հոդվածի Կոնվենցիայով և դրանց կից Արձանագրություններով Բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար հիմնել է Մարդու իրավունքների Եվրոական դատարան, որը գործում է մշտական հիմունքով: 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը:

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

«Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասինե շրջանակային Կոնվենցիա, որն ընդունվել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից 1994թ. նոյեմբերի 10-ին: Այն բաց էր Եվրոպայի Խորհրդի անդամերկրների ստորագրման համար 1995թ. փետրվարի 1-ից: Հայաստանի Հանրապետությունը Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան ստորագրել է 1997 թվականի հուլիսի 25-ին՝ վերջինիս 27-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Նախարարների կոմիտեի հրավերով, երբ դեռևս, Եվրոպայի Խորհրդի անդամ չէր հանդիսանում: Կոնվենցիան վավերացվել է 1998 թվականի փետրվարի 17-ին: Հայաստանի Հանրապետության համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 1998 թվականի նոյեմբերի 1-ին: Կոնվենցիայի պահանջի համաձայն, 2001թ. ի վեր Հայաստանը պարբերաբար Եվորպայի խորհրդին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության զեկույցը ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին: Ազգային զեկույցի ուսումնասիրության շրջանակում Խորհրդատվական կոմիտեի պատվիրակությունն այցելում է Հայաստան՝ կառավարության ներկայացուցիչներից, ինչպես նաև հասարակական կազմակերպություններից և այլ անկախ աղբյուրներից Շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ հետագա տեղեկություն ստանալու համար: Այնուհետև, անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է իր մեկնաբանությունները Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կարծիքի կապակցությամբ:

2009թ. Հայաստանի Հանրապետությունը “Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին” շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ Եվորպայի խորհրդին է տրամադրել երրորդ զեկույցը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՄ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱ

«Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական Խարտիանե Եվրոպայում ուժի մեջ է մտել 1998 թվականի մարտի 1-ից, որից չորս տարի անց այն ուժի մեջ մտավ նաև ՀՀ-ում (Հայաստանի Հանրապետությունն այն վավերացվել է 2001 թվականի դեկտեմբերի 28-ին, որն ուժի մեջ է 2002 թվականի մայիսի 1-ից)։

Հայաստանը նախկին ԽՍՀՄ պետություններից առաջինն էր, որ ընդունեց ու վավերացրեց Խարտիան և շարունակում է որոշակի քայլեր կատարել այն իրացնելու դժվարին ճանապարհին։ Այս ընթացքում ՀՀ-ն պատրաստել է Խարտիայով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբեյալ երկու զեկույցներ։

Հայաստանի Հանրապետությունում ապրում տասից ավելի համեմատաբար փոքրաթիվ ազգություններ։ Ազգային փոքրամասնություններից ոչ մեկը ՀՀ-ում բնիկ (ավտոխտոն) չէ. նրանց մեծագույն մասը ՀՀ տարածքում բնակություն են հաստատել առավելագույնը 200 տարի առաջ։ Նրանցից միայն եզդիները, ռուս-մալականները, ասորիները և մասամբ հույներն են, կապվում են ՀՀ որոշակի տարածքի հետ։ Խարտիայի 1-ին հոդվածի ա. կետի սահմանման համաձայն, ՀՀ-ն ճանաչել է երկրում գործածվող փոքրամասնության 5 լեզուների հատուկ կարգավիճակը։ Դրանք են ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը, քրդերենը։

Խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, 2003թ. ի վեր Հայաստանը պարբերաբար Եվորպայի խորհրդին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության զեկույցը Խարտիայի դրույթների կատարման մասին։ Ազգային զեկույցի ուսումնասիրության շրջանակում Փորձագիտական կոմիտեի պատվիրակությունն այցելում է Հայաստան՝ կառավարության ներկայացուցիչներից, ինչպես նաև հասարակական կազմակերպություններից և այլ անկախ աղբյուրներից Խարտիայի կատարման վերաբերյալ հետագա տեղեկություն ստանալու համար։ Այնուհետև, անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է իր մեկնաբանությունները Փորձագիտական կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կարծիքի կապակցությամբ։

2007թ. Հայաստանի Հանրապետությունը «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական Խարտիայիե կատարման վերաբերյալ Եվորպայի խորհրդին է տրամադրել իր երկորդ զեկույցը: Իսկ 2009թ. ստացել է այդ զեկույցի կապակցության Փորձագիտական կոմիտեի կարծիքը:

ՌԱՍՍԱՅԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան ընդունվել է 1965թ. դեկտեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետությունը սույն Կոնվենցիան վավերացրել է 1993թ. հունիսի 23-ին: Սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն, ստեղծված է Ռասայական խտրականության վերացման կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե): Համաձայն 9-րդ հոդվածի մասնակից պետությունները պարտավորվում են Կոմիտեի կողմից քննարկման համար Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ներկայացնել զեկույց իրենց ընդունած օրենսդրական, դատական, վարչական կամ այլ միջոցների մասին, որոնց օգնությամբ կենսագործվում են սույն Կոնվենցիայի դրույթները՝ (ա) տվյալ պետության համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, և (բ) հետագայում յուրաքանչյուր երկու տարին մեկ և ամեն անգամ, երբ դա պահանջում է Կոմիտեն: Կոմիտեն կարող է Կոնվենցիայի մասնակից պետություններից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն: Հայաստանի առաջին և երկրերդ զեկույցները Կոմիտեն քննարկել է 1998թ.. երրորդ և չորրորդ համատեղ զեկույցը՝ 2002թ.:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՑԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային

կոնվենցիան ընդունվել է 1966թ. դեկտեմբերի 16-ին: Սույն Կոնվենցիան Հայաստանի

Հանրապետությունը վավերացրել է 1993թ. հունիսի 23-ին: Առաջին զեկույցը Հայաստանը

ներկայացրել է 14.07.97թ. և այն պաշտպանել է 26.10.98թ.:

Սույն կոնվենցիայի 28-րդ հոդվածի համաձայն ստեղծվել է Մարդու իրավունք-

ների կոմիտե (Կոմիտե): 40-րդ հոդվածի համաձայն Կոնվենցիային մասնակից պե-

տությունները պարտավորվում են զեկույցներ ներկայացնել Կոմիտեին սույն Դաշ-

նագրով ճանաչվող իրավունքների իրականացման ուղղությամբ իրենց ձեռնարկած

միջոցների և այդ իրավունքների օգտագործման ասպարեզում ձեռք բերած առաջըն-

թացի մասին.

ա) համապատասխան մասնակից պետության համար սույն Դաշնագրի ուժի

մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում,

բ) դրանից հետո՝ բոլոր այն դեպքերում, երբ դա կպահանջի Կոմիտեն:

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը, Կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո, կարող

է շահագրգիռ մասնագիտացված հաստատություններին ուղարկել զեկույցների այն

հատվածների պատճենները, որոնք կարող են վերաբերել նրանց իրավասության ո-

լորտին: Կոմիտեն ուսումնասիրում է սույն Դաշնագրի մասնակից պետությունների

ներկայացրած զեկույցները: Նա մասնակից պետություններին է ուղարկում իր զե-

կույցները և ընդհանուր կարգի այնպիսի դիտողություններ, որոնք ինքը նպատակա-

հարմար է համարում: Կոնվենցիային մասնակից պետությունները կարող են

Կոմիտեին ներկայացնել իրենց նկատառումները դիտողությունների վերաբերյալ։